զարման այստեղ սոսկ դրաշար չէր, նա արդէն «Կռունկ»ի սրբագրիչ էր և ձեռք էր բերել ծանօթների լայն շրջան, որոնցից մեծապէս կարող էր օգտուել, այնպէս որ հետզհետէ դէպի ուսումը տածած նախկին ծարաւը բուռն թափով հանդէս է գալիս և սկսում կանչել նրան։ Աղայեանն այստեղ փորձում է գրել մի քանի ոտանաւորներ, որոնք և տպւում են «Կռունկ»ում։ Բայց այդ բոլորը նրա աչքում չնչին էին և նա որոշում է թողնել ամեն բան ու գնալ ուսումը կատարելագործելու։

Կը շարունակուի.

Աբել Սարկաւագ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. պատարագից յետոյ կատարուեցին հանգստեան պաշտօններ կաթուղիկոսական Ամեն. Տէր Տեղակալի, միաբանութեան և բազմաթիւ ժամաւորների ներկայութեամբ Յունիսի 26-ին գրական և մանկավարժական վաստակաւոր հանգ. Ղազարոս Աղայեանի յիշատակին և Յուլիսի 3-ին բարեգործ վաճառական հանգ. Սարգիս Գալստեան Ջանումեանցի յիշատակին։

---

Տարւոյս յունիսի 26-ին ուսումնարանական ուղևորութեամբ Մայր Աթոռ ժամանեցին Թաւրիզի կենդրոնական դպրոցի Ե. դասարանի աշակերտներ և չորս ուսուցիչներ Լիլաւայի տեսուչ և կենդրոնական դպրոցի ուսուցիչ Պ. Կարապետ Պետեանի առաջնորդութեամբ։ Ուղևոր դըպրոցականները հինգ օր հիւրասիրուելով Մայր Աթոռում՝ տեսան բոլոր նշանաւոր հաստատութիւնները ու հնութիւնները, Ս. Թարգմանչաց տօնին գնացին Օշական, ուր հիւրասիրուեցին տեղւոյն Մամբրէ քահանայի տանը, այցելեցին Աշտարակ գիւղը և Մուղնի, Յովհաննավանք ու Սաղմոսավանք վանքերը և վերադառնալով Մայր Աթոռ՝ յուլիսի 1-ին շարունակեցին իրանց ուղևորութիւնը դէպի Անի, Սանահին, Հաղբատ և Թիֆլիզ, իսկ վերադարձին պէտք է տեսնեն Սևանի վանքը։

Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսը յայտնում է, որ ստացել և պատշաճ տոմարում մուտք է գրել

Ա. Հանգ. Աղէքսանդր Մանթաշեանի ընտիր դիպակ դիպաշարդը, որ յանձնել է իրան Ամեն. Տ. Տեղակալը տարւոյս յունիսի 8-ին № 1639 առաջադրութեամբ։

Բ. Մայր Աթոռիս միաբան Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանի եկեղեցական զգեստները որք են

1. Եպիսկոպոսական ասղարուր խոյր երկու հատ
2. » » Եմիփորոն երկու հատ
3. Ասղարուր Վակաս երկու հատ
4. Փորուրար. մէկը ռուսատանի դիպակ և միւսը ասղարուր—երկու հատ,
5. Ժամարարի շապիկ երկու հատ,
6. Բազպան երկու զոյգ,
7. Հողաթափ երկու զոյգ
8. Արծաթ գօտի մի հատ
9. Ձեռքի արծաթ խաչ ականակուռ մի հատ.
10. Մի արծաթագլուխ գաւազան ասղնեգործ մարգարտայեռ երկու քօղերով

Գ. Մայր Աթոռիս միաբան Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի եկեղեցական զգեստները, որք են.

1. Ռուսաստանի դիպակ եմիփորոն մի հատ
2. Սպիտակագոյն ատլաս շուրջառ մի հատ
3. Նոյն կտորից փորուրար մի հատ
4. Նոյն կտորից բազպան մի զոյգ
5. Ժամարարի գօտի մի հատ
6. Մետաքս ժամաշապիկ մի հատ
7. Ասղնեգործ հողաթափ մի զոյգ
6. Ձեռաց արծաթ, ոսկեզօծ խաչ մի հատ։

Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի առաջադրութեամբ Մայր Աթոռիս գանձարանից ուղարկուեց 200 ռ. Ատրպատականի թեմական խորհրդին տեղոյն ասպատակութեան ենթարկուած հայերին ի նպաստ և 1000 ռ. Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին՝ տեղւոյն հրդեհից վնասուած հայերի համար։

## Ստացուած գրքեր

1, Վ. Փափազեան. Զրոյցներ, Շուշի. 1911. գինն է 50 կոպ.

2. Քրիստոնէական Հաւատ, Յոյս և Սէր. կազմեց Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեան Թիֆլիզ. 1911. գինն է 30 կոպ.

## Պարբերական նոր հրատարակութիւններ.—

ԱՐԱԳԱԾ. պատկերազարդ շաբաթաթերթ. ազգային, գրական, քաղաքական 1911. Նիւ-Եօրք։ Բաժանորդագին Թուրքիոյ մէջ տարեկան 60 ղրշ. վեց ամսից՝ 30 ղրշ. Արագած կը գտնուի բոլոր գրավաճառների և լրագրավաճառների մօտ։